ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
22.10.2021թ. կնքված N ՁԿ-ՀԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով
կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի

ք. Երևան «26» հունվարի 2022թ.

Ձրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արտ Պլաս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 22.10.2021թ. կնքված N ՁԿ-ՀԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը և հաշվի առնելով «Արտ Պլաս» ՍՊԸ-ի 13.01.2022թ. առաջարկությունը, ինչպես նաև 20.01.2022թ. մասնագիտական խմբի արձանագրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 ՁԿ-ՀԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով գնման պայմանագրի աշխատանքների կատարման սահմանված ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով, այն է՝ Պայմանագրի 1.3 կետի և Հավելված թիվ 2-ի «3 ամիս» բառերը փոխարինել «4 ամիս» բառերով և աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանել 22.02.2022թ.:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և կնքման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրի գործողությունը տարածվում է կողմերի՝ մինչև համաձայնագրի կնքումը փաստացի ծագած հարաբերությունների վրա, ինչպես նաև գործում է մինչև կողմերի կողմից սույն համաձայնագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ձրային կոմիտե	«Արտ Պլաս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ՀՀ Արարատի մարզ, գ. Շահումյան, Արցախի 5
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Արտաշատ մ/ճ
Հ/Հ 900011035038	Հ/Հ 163098331594
ՀՎՀՀ 02555816	ՀՎՀՀ 04225743
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող	հեռ. 098 000 204, 093 000 204:
	էլ. հասցե artplas@inbox.ru
_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	_____ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ